

## Կոռուպցիայի ընկալման 2019 թվականի համաթիվը ցույց է տալիս հակակոռուպցիոն ջանքերի լճացում G7 երկրներում

*Վերլուծությունը ցույց է տալիս, որ կոռուպցիան ավելի է տարածված այն երկրներում, որտեղ դրամն ապրում է քաղաքական իշխանության վրա*

Բեռլին, 23 հունվարի, 2020 թ. – Համաձայն Կոռուպցիայի ընկալման (ԿԸՀ) 2019 թ. համաթվի, որն այսօր հրապարակվեց Թրանսփարենսի Ինթերնեշնլի կողմից, աշխարհի երկրների ավելի քան երկու երրորդում, ներառյալ՝ առավել զարգացած տնտեսությունն ունեցող երկրները, հակակոռուպցիոն ջանքերի առումով գրանցվել է լճացում կամ նահանջ:

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ այն երկրները, որտեղ ընտրությունների քարոզարշավների և կուսակցությունների ֆինանսավորումը ենթակա է շահադիտական նկատառումներ հետապնդող քաղաքական ուժերի ազդեցությանը, ավելի անկարող են պայքարել կոռուպցիայի դեմ:

Ինչպես նշում է Թրանսփարենսի Ինթերնեշնլի Նախագահ տիկին Դեյլիա Ֆերեյրա Ռուբինո. «Իշխանության վերին օղակներում առկա կոռուպցիայից հիասթափվածությունը և ինստիտուտների նկատմամբ վստահության պակասը մատնացույց են անում քաղաքական բարեվարքության ավելի բարձր մակարդակ ունենալու անհրաժեշտությունը: Իշխանությունները պետք է շտապ կարգով քայլեր ձեռնարկեն ընդդեմ կուսակցությունների ֆինանսավորման մեջ մեծ փողերի այլասերող դերի և այն անհարկի ազդեցության, որ այդ փողերն ունենում են մեր քաղաքական համակարգերի վրա»:

### ԿԸՀ 2019-ի մի քանի կարևոր տվյալներ

ԿԸՀ-ն դասակարգում է 180 երկրները և տարածքներն ըստ իրենց հանրային ոլորտում առկա կոռուպցիայի մակարդակների ընկալման՝ հիմնվելով գործարար ոլորտում ղեկավար պաշտոններում գտնվող պաշտոնյաների շրջանում անցկացված 13 փորձագիտական գնահատումների և հարցումների վրա: Այն կիրառում է 0-ից (բացարձակապես կոռումպացված) մինչև 100 (բացարձակապես մաքուր) սանդղակը:

Դասակարգման մեջ ներառված երկրների ավելի քան երկու երրորդի ԿԸՀ արժեքները 50-ից պակաս են, իսկ ԿԸՀ զրոքալ միջին արժեքը հավասար է 43-ի: Սկսած 2012 թվականից՝ միայն 22 երկրներ են նշանակալիորեն բարելավել ԿԸՀ իրենց արժեքները, որոնցից են Էստոնիան, Հունաստանը և Գայանան: Նշանակալի նահանջ են արձանագրել 21 երկրներ, որոնցից են Ավստրալիան, Կանադան և Նիկարագուան:

Մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ տնտեսապես զարգացած մի շարք երկրներ չեն կարող թույլ տալ իրենց բավարարված զգալ, եթե նրանք շարունակում են հավակնել կոռուպցիայի ցածր մակարդակ ունեցող երկրների շարքում մնալուն: G7 երկրներից չորսի 2019 թ. ԿԸՀ արժեքն ավելի ցածր է, քան նախորդ տարում. դրանք են **Կանադան** (-4 միավոր), **Ֆրանսիան** (-3 միավոր), **Մեծ Բրիտանիան** (-3 միավոր) և **ԱՄՆ-ն** (-2 միավոր): **Գերմանիայի** և **Ճապոնիայի** ԿԸՀ արժեքները մնացել են նույնը, և միայն **Իտալիան** է առաջադիմել 1 միավորով:

### Կոռուպցիան և քաղաքական բարեվարքությունը

Վերլուծությունը ցույց է տալիս, որ այն երկրները, որոնց ԿԸՀ-ն բարձր է, ունեն նախընտրական քարոզչության ֆինանսավորման օրենսդրության ավելի արդյունավետ կիրարկում և քաղաքական ուժերի միջև երկխոսության ավելի լայն ընդգրկում:

Նախընտրական քարոզչության ֆինանսավորման օրենսդրական ավելի համապարփակ կարգավորում և դրա ավելի համակարգված կիրարկում ունեցող երկրների ԿԸՀ միջին արժեքը հավասար է 70-ի, այն դեպքում, երբ այդպիսի կարգավորում ընդհանրապես չունեցող կամ այն անբավարար կերպով կիրարկող երկրների ԿԸՀ միջին արժեքները հավասար են, համապատասխանաբար, 34-ի և 35-ի:

2012 թվականի համեմատությամբ իրենց ԿԸՀ արժեքները նշանակալիորեն բարելաված երկրների 60 տոկոսը նաև խստացրել է նախընտրական քարոզչության ժամանակ արվող նվիրատվությունների կարգավորումները:

«Երկրների մեծ մասում կոռուպցիայի դեմ պայքարում իրական առաջընթացի բացակայությունը հիասթափեցնող է և ամենուրեք ունի շատ մեծ բացասական ազդեցություն քաղաքացիների վրա: Կոռուպցիային վերջ տալու և մարդկանց կյանքը բարելավելու հնարավորություն ունենալու համար մենք պետք է վճռական ջանքեր գործադրենք՝ լուծելու քաղաքականության և մեծ փողերի միջև կապի հիմնախնդիրը»,- նշում է Թրանսփարենսի Ինթերնեշնլի գործադիր տնօրեն տիկին Պատրիսիա Մորեյրան:

Քաղաքական ուժերի միջև ավելի լայն և բաց երկխոսության առկայությամբ երկրների ԿԸՀ միջին արժեքը հավասար է 61-ի, այն դեպքում, երբ այդպիսի երկխոսության ցածր մակարդակ ունեցող կամ ընդհանրապես դրա բացակայությամբ երկրների ԿԸՀ միջին արժեքն հավասար է ընդամենը 32-ի:

2012 թվականի համեմատ իրենց ԿԸՀ արժեքի նշանակալի նվազում գրանցած երկրների զգալի մեծամասնությունում քաղաքական, սոցիալական և գործարար ոլորտների առավել աչքի ընկնող ներկայացուցիչները ներգրավված չեն քաղաքական որոշումների կայացման գործընթացներում:

**Առաջարկություններ**

Կոռուպցիան նվազեցնելու և քաղաքականության նկատմամբ վստահությունը վերականգնելու նպատակով Թրանսփարենսի Ինթերնեշնլը առաջարկում է, որպեսզի իշխանությունները.

- Ամրապնդեն զսպումների և հավասարակշռումների մեխանիզմները և նպաստեն իշխանության ճյուղերի միջև տարանջատմանը:
- Վճռական քայլեր ձեռնարկեն՝ հաղթահարելու «արտոնյալների» օգտին բյուջետային ծախսերի կատարումը և հանրային ծառայությունների մատուցումը՝ պայմանավորված անձնական կապերով կամ որոշակի խմբերի նկատմամբ «առանձնահատուկ» վերաբերմունքով:
- Վերահսկել կուսակցությունների և նախընտրական քարոզչության ֆինանսավորումը՝ կանխարգելելու քաղաքականության մեջ փողի չափազանց մեծ ազդեցությունը:
- Կարգավորել շահերի բախումը և լուծում գտնել «պտտվող դռների» հիմնախնդիրին:
- Կարգավորել լրբբիստական գործունեությունը՝ նպաստելով որոշումների ավելի մասնակցային կայացմանը:
- Ամրապնդել բարեվարքությունն ընտրական գործընթացներում և պատժել ապատեղեկատվություն վրա հիմնված քարոզչություն իրականացնելու համար:
- Օժտել քաղաքացիներին քաղաքական ազդեցությամբ և պաշտպանել ակտիվիստներին, ազդարարներին և լրագրողներին:

Առաջարկությունների ամբողջական ցանկը տե՛ս [www.transparency.org/cpi/2019](http://www.transparency.org/cpi/2019) հղումով:

## *Ծանոթագրություն*

Թրանսփարենսի Ինթերնեշնլի Կոռուպցիայի ընկալման 2019 թվականի համաթիվը ներառում է նաև տվյալներ Վըրայըթիզ օֆ Դեմոքրասի (Ժողովրդավարության տարատեսակներ – V-Dem) ծրագրից:

### **Թրանսփարենսի Ինթերնեշնլի մասին**

Թրանսփարենսի Ինթերնեշնլը վերջին 25 տարիներին կոռուպցիայի դեմ պայքարող քաղաքացիական հասարակության առաջատար համաշխարհային կազմակերպությունն է: Համատեղե՛ք մեր ջանքերը [www.transparency.org](http://www.transparency.org) – ի միջոցով:

### **Կոռուպցիայի ընկալման համաթվի մասին**

Սկսած 1995թ. իր առաջին հրապարակումից՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլի ամենանշանակալի հրապարակումը՝ Կոռուպցիայի ընկալման համաթիվը, դարձավ հանրային ոլորտում կոռուպցիայի վերաբերյալ համաշխարհային առաջատար ցուցիչը: Համաթիվը տալիս է կոռուպցիայի հարաբերական աստիճանի տարեկան պատկերը՝ դասակարգելով պետություններն ըստ համաթվի արժեքների: 2012 թվականին Թրանսփարենսի Ինթերնեշնլը վերանայեց համաթվի հաշվարկման համար օգտագործվող մեթոդաբանությունը, որը հնարավորություն տվեց տարի առ տարի համեմատելու համաթվի արժեքները: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք [www.transparency.org/research/cpi](http://www.transparency.org/research/cpi)